ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2007.
ԳԵԹ ՈՏՆԱՉԱՓ՝ ԱՄԵՆՔԻՑ

19 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Քայլ՝ հետքա՞յլ

Ինչպիսի՞ ընտրություններ ենք ուզում. ազա՞տ, արդա՞ր, թափանցի՞կ, իսկ միգուցե պարզապես պետք է օրինակա՞ն ընտրություններ ունենալ: Չէ՞ որ ինչպես չի կարելի մարդ սպանել, հարկերից խուսափել, կարմիր լույսի տակով անցնել, այնպես էլ չի կարելի ընտրությունները կանոնակարգող օրենսդրական դաշտի պահանջները խախտել: Հետևաբար հարկ է պարզապես խոսել այն մասին, որ մեզ օրինական ընտրություններ են հարկավոր:

Իսկ ո՞վ պետք է ապահովի այս կամ այն գործընթացի օրինականությունը: Նախ և առաջ պետությունը: Օրինական ընտրությունների ապահովման առյուծի բաժինը, փաստորեն, պետությանն է, քանզի օրինականության ապահովման գործառույթը պետությանն է: Այս դեպքում խոսքն իշխանության մասին է հենց, քանզի մեզանում իրողությունն այն է, որ պետությունը հենց գործող իշխանությունն է: Որքանո՞վ է պատրաստակամ և շահագրգիռ գործող իշխանությունը՝ մինչև վերջ ապահովելու օրինականություն այս ոլորտում և այս անգամ: Ցանկացած մեկի սեփականության իրավունքների անվերապահ պաշտպանվածության և իշխանության փոխանցման/հանձնման մեխանիզմի բացակայության, առանձին դեպքերում նաև իշխանությունը հանձնելուց հետո անձնական անվտանգության իրական երաշխիքների ինստիտուտի անկատարության պայմաններում, թերևս, այդ պատրաստակամությունն ու շահագրգռությունը բնականաբար ձգտում են զրոյի:

Ընդդիմությունն էլ գործառույթի իր բաժինն ունի: Շահագրգի՞ռ է այն այսօր. խոսքով՝ ակնհայտորեն այո: Իսկ գործով, կարծես, կաղում է. նախ, որովհետև իրապես անուժ է, ապա… բա «օրինական» ընտրություններում պարտվելուց հետո՞ ինչ պիտի բարձրաձայնել:

Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, որը, կարծես, բնական է դառնում, և անիվը պատմության՝ վերադառնում:

Օրինական ընտրությունների հնարավոր բլիթները

Ժողովրդավարական ընտրությունները կլուծեն բազմաթիվ խնդիրներ: Սա համընդհանուր ճշմարտություն է և ապացույցների կամ հիմնավորող թվարկումների կարիք առանձնապես չունի: Սա նաև իր որոշակի հավելումներն ունի այսօրվա Հայաստանի համար: Անընդհատ խորացող մեկուսացման, կամ մեկուսացման՝ տարածում գտնող ընկալման պայմաններում ժողովրդավարության որևէ նկատելի հաղթանակ կարող է ճեղքող մեխանիզմ դառնալ, նոր լույս բանալ թե՛ իրականության և թե՛ այդ իրականության ընկալման հարթություններում: Այն նաև հուսալքության՝ ամենատարբեր մակարդակներում նկատվող ալիքի վրա ինքնավստահություն կտա. ինքնավստահություն, որ ժողովրդավար ես: Սա պիտի որ շատ քաղցր զգացում լինի…

Հայտնագործություն արած չենք լինի, եթե պնդենք, որ գալիք ընտրությունների օրինական և օրինակելի անցկացումն ուղղակիորեն կանդրադառնա ԼՂ հակամարտության բանակցային գործընթացի վրա: «Կոնֆլիկտների հանգուցալուծում» խաղի համաշխարհային թատերաբեմում Հայաստանն այլևս պարտադրված է նժարին դնել ևս մեկ՝ ադրբեջանական նավթին հավասարակշռող գործոն: Իսկ բնությունը մեզ այստեղ այլընտրանք, թերևս, չի թողել: Նավթային Ադրբեջանին հակընդեմ հավակնություններով կարող է

հանդես գալ միայն ժողովրդավար Հայաստանը. մեր օրերում, ցավոք, սա է դառնում միակ «պատմական ճշմարտությունը»:

Այսօր արդեն պարզ է նաև, որ գալիք ընտրությունները մեզ համար մի տեսակ ստուգարք են դառնալու: Ստուգարք, որով պիտի ճշգրտվեն ֆինանսական օգնության խողովակների հետագա տրամաչափերը: Անշուշտ կարող ենք պնդել, թե արտարժութային մուտքերի ձեռքին առանց այն էլ «կրակն ընկած» տնտեսության համար մի քանի փակվող ծորակները ոչինչ են: Մի քայլ առաջ նայողի համար, սակայն, սա «տափակ» է հնչում՝ ամենևին ոչ հավակնոտ:

Իսկ ի՞նչ անել...

Պատասխանողի կենսագործունեությունն է որոշում պատասխանների բազմազանությունը, որը, որոշակի ճիգերի դեպքում, կարելի է ամփոփել հետևյալ տարբերակներում.

ա. ոչինչ

Այո, ոչինչ չես անում: Թեև կույր ու խուլ չես, բայց հոգնել ես: Միաժամանակ կարողացել ես ստեղծել քո հարմարավետ պատյանը, որից դուրս իրականությունը քեզ այնքան էլ չի հուզում,

բ. բոյկոտել

Բոյկոտել բուն քվեարկության գործընթացը, որովհետև ընտրություն, որպես այդպիսին, դու արդեն չես կարող անել: Օրինական, իմա՝ ազատ, անկախ և թափանցիկ, ընտրություններ կարելի է իրականացնել այն դեպքում, եթե քեզ հնարավորություն է տրվում մինչև բուն քվեարկությունը հաղորդակից լինել ազատ ու անկախ արտահայտված տեսակետների, ակտիվ մասը լինել քաղաքացիական և քաղաքական գործընթացի, որտեղ բախվում են կարծիքներ, գաղափարախոսություններ և ոչ անհատներ: Նման գործընթաց Հայաստանում վաղուց չի եղել, իսկ քվեարկության ժամանակ խամաճիկի դերում հանդես գալու հեռանկարից կփրկի մի լուծում՝ բոյկոտել այդ նույն քվեարկությունը,

գ. անընդհատ և ամենուր բարձրաձայնել կեղծ ընտրությունների հետևանքների միասին

Թերևս ամենախրթին ու ամենաերկար ճանապարհը: Միևնույն ժամանակ միակը, որ կարող է ապահովել որակապես այլ արդյունք: Գիտակցու՞մ է արդյոք այսօր Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացի, թե կեղծված ընտրություններն ինչ տաշտակի առջև են իրեն կանգնեցնելու: Թերևս ոչ, որովհետև այս մասին սովորաբար լռում են: Դա չեն քննարկում: Ու գիտակից քաղաքացին խարխափում է անելանելիության մեջ՝ զգալով, որ ինչ-որ բան այնուամենայիվ այն չէ, բայց չկարողանալով անվանել այդ «ինչ-որ բանը»: Իսկ դրա անվանումը հստակ է՝ վտանգված արժեքներ, վտանգված անվտանգություն, անբեկանելի բևեռացում:

Հիմա եկեք ընտրենք ճիշտ տարբերակը:

Համառոտագիրը մշակվել է ՄՀՄԿ 2007թ-ի փետրվարի 12-ին կայացած՝ «Ընտրություններ-2007» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ: